Անդրադարձ կարմրուկի հետ կապված մտահոգություններին՝ կրթական միջավայրերի համար

1. Ինչո՞ւ են վերջերս կարմրուկի դեպքերի մասին լուրերը շատացել:

Միացյալ Նահանգներում մարդկանց մեծ մասը պաշտպանված է կարմրուկից պատվաստման միջոցով: Հնարավոր է, որ Միացյալ Նահանգներում կարմրուկի ավելի շատ դեպքեր են հանդիպում, քանի որ ավելի շատ մարդիկ են ճամփորդում կամ ճամփորդել այնպիսի երկրներ կամ այնպիսի երկրներից, որտեղ կարմրուկն ավելի տարածված է:

2. Արդյո՞ք կարմրուկը առողջության համար վտանգ է ներկայացնում կրթական միջավայրերում:

Կարմրուկը լուրջ հիվանդություն է, որը տարածվում է հեշտությամբ և արագ: Տասը մարդուց ինը, որոնք նախկինում չեն պատվաստվել կարմրուկի դեմ կամ չեն վարակվել, կունենան կարմրուկ, եթե շփվեն վիրուսի հետ: Այն օդակաթիլային վիրուս է և տարածվում է օդի միջ և մակերեսների վրա, երբ վարակված անձը շնչում, խոսում, փռշտում կամ հազում է: Կարմրուկով վարակվելը լուրջ վտանգ է այն աշակերտների և աշխատակիցների առողջության համար, որոնք նախկինում վարակված չեն եղել և չեն ստացել իրենց կարմրուկ-կարմրախտ-խոզուկի (ԿԿԽ՝ MMR) պատվաստանյութը կամ ԿԿԽ և ջրծաղիկի՝ վարիցելա (ԿԿԽՋ՝ MMRV), պատվաստանյութը: Այն հաստատություններում, որտեղ մեծ է չպատվաստված աշակերտների և աշխատակիցների թիվը, կարմրուկը կարող է հեշտությամբ փոխանցվել և վարակել մարդկանց մեծ խմբերի՝ առաջացնելով հոսպիտալացումներ և ծանր հիվանդություններ նախապես անվարակունակություն չունեցող մարդկանց շրջանում:

3. Որո՞նք են կարմրուկի ախտանիշները:

- Բարձր ջերմություն (101°F կամ ավելի բարձր)
- Հազ
- Քթահոսություն
- Կարմրած, արցունքոտ աչքեր
- Ցան, որը առաջանում է դեմքի վրա և տարածվում դեպի մարմնի մյուս մասները

Կարմրուկը կարող է առաջացնել բարդություններ, օրինակ՝ ականջի վարակ կամ փորլուծություն: Այն կարող է առաջացնել նաև ծանր հիվանդություններ, ինչպես օրինակ՝ թոքաբորբ ու էնցեֆալիտ (գլխուղեղի այտուցում) և նույնիսկ մահ:

4. Ի՞նչ պետք է մենք անենք, եթե հաստատությունում որևէ մեկը կարմրուկ ունի: Հետևեք այս ուղղորդումներին, երբ աշակարտները կամ աշխատակիցները՝

Դուրս թողնել	Անձնակազմը, ուսանողները կամ այցելուները, որոնք հաստատվել է կամ կասկած կա, որ կարմրուկ ունեն, պետք է անհապաղ հեռացվեն հաստատությունից, և նրանք կարող են վերադառնալ իրենց ցանի առաջանալուց 4 օր հետո: Նշում. ցանի առաջացման օրը օր 0-ն է: • Կարմրուկի հայտնի կամ կասկածվող դեպքով անչափահասներին պետք է տեղավորել փակ դռներով առանձնասենյակում, մինչև որ նրանց կարողանան վերցնել ծնողներ/խնամակալները: • Անձնակազմը և 2 տարեկան ու ավելի բարձր տարիքի երեխաները պետք է կրեն դեմքին լավ նստող դիմակներ:
Զեկուցել	Կարմրուկը զեկուցման ենթակա հիվանդություն է, որի մասին պետք է անմիջապես հայտնել կասկածի դեպքում: • Հերթապահ համաճարակաբանի համար զանգահարեք (213) 351-7880՝ երկուշաբթիից ուրբաթ՝ առավոտյան 8:30-ից երեկոյան 5:00-ն: • Աշխատանքային ժամերից հետո Հերթապահ վարչական պատասխանատուի (AOD) համար զանգահարեք (213) 974-1234 և սեղմեք 8:

Գլխավոր կետեր

- Կարմրուկը վիրուս է, որն ապրում է քթում և կոկորդում: Այն չափազանց վարակիչ է և հեշտությամբ տարածվում է օդի միջոցով, երբ վարակված անձը խոսում, շնչում, հազում կամ փռշտում է:
- Կարմրուկը առողջության համար վտանգավոր է այն աշխատակիցների և աշակերտների համար, որոնք երբեք չեն հիվանդացել կարմրուկով կամ չեն պատվաստվել ԿԿԽ (MMR) կամ ԿԿԽՋ (MMRV) պատվաստանյութով:
- Պատվաստումը լավագույն միջոցն է՝ կանխելու կարմրուկով վարակվելը և այն տարածելը:
- Հանրային Առողջությունը քայլեր է ձեռնարկում՝ կանխելու կարմրուկի տարածումը Լոս Անջելեսի Շրջանում, սակայն Ձեր օգնության կարիքն ունի:

Ո՞ւր գնալ հավելյալ տեղեկությունների համար

Պատվաստման ժամանակացույց՝
https://www.cdc.gov/vaccines/schedules/

Կարմրուկ՝
http://ph.lacounty.gov/ip/diseases/measles/index.htm

Պատվաստման պահանջներ դպրոց ընդունվելու համար
http://www.shotsforschool.org/

5. Ինչպե՞ս կարող եք կանխել կարմրուկի տարածումը:

Հետևեք այս քայլերին՝ Ձեր կրթական համայնքն առողջ պահելու համար.

Խնդրեք աշակերտներին, աշխատակիցներին և այցելուներին ժամանակին անել իրենց ԿԿԽ (MMR) կամ ԿԿԽՁ (MMRV) պատվաստումը: Պատվաստվելը լավագույն ուղին է կարմրուկով վարակվելուց խուսափելու և դրա տարածումը կանխելու համար: Մարդիկ պետք է ստանան իրենց ԿԿԽ (MMR) պատվաստանյութը, եթե նրանք պատվաստված չեն կամ չգիտեն՝ արդյոք նախկինում պատվաստվել են ԿԿԽ-ով, թե ոչ:

Խնդրեք մարդկանց զանգահարել իրենց բժշկին: Այն մարդիկ, որոնք չգիտեն, թե կարմրուկի պատվաստման ինչ կարգավիճակ ունեն, կամ արդյոք շփում ունեցել են կարմրուկով հիվանդի հետ, պետք է զանգահարեն իրենց բժշկին, որպեսզի թեստավորվեն ստուգելու համար՝ արդյոք կարմրուկի նկատմամբ անընկալունակ են, կամ որպեսզի ստանան կարմրուկ պարունակող պատվաստանյութ: Եթե նրանք հիվանդ են, պետք է զանգահարեն իրենց բժշկի գրասենյակ նախքան այնտեղ գնալը, որպեսզի աշխատակիցները պատրաստվեն և տարածումը կանխելու համար նախազգուշական քայլեր անեն:

Խնդրեք աշխատակիցներին իմանալ կարմրուկի նշանները: Հաստատության աշխատակիցները պետք է ծանոթանան կարմրուկի ախտանիշների հետ, որպեսզի կարողանան նկատել և առանձնացնել այն աշակերտներին կամ աշխատակազմի այլ անդամներին, որոնք հնարավոր է, որ հիվանդ լինեն, և կապ հաստատեն հանրային առողջության հետ՝ ուղղորդումների համար. տե՛ս «Ձեկուցել» բաժինը 1-ին էջում:

Խնդրեք աշակերտներին ու աշխատակիցներին մնալ տանը, երբ հիվանդ են: Տանը մնալը, ինչպես նաև բերանը հազալիս ու փռշտալիս արմունկով կամ անձեռոցիկով ծածկելը, ձեռքերը հաճախ օճառով ու ջրով լվանալը, աչքերին, քթին կամ բերանին չդիպչելը օգնում են մարդկանց կանխել հիվանդություններ ձեռք բերելը և դրանք տարածելը:

6. Որտե՞ղ կարող են ընտանիքները պատվաստվել:

Անհատները կարող են զանգահարել իրենց բժշկին՝ ԿԿԽ (MMR) կամ ԿԿԽՁ (MMRV) պատվաստումն անելու համար, որի ծախսերը կարող է փակել իրենց ապահովագրությունը: Նրանք կարող են նաև պատվաստվել որևէ դեղատանը կամ կլինիկայում, որն առաջարկում է անվճար կամ ցածր արժեքով պատվաստումներ: Եթե անհատները չունեն բժշկական ապահովագրություն կան մշտական բժշկական մատակարար, նրանք կարող են այցելել http://publichealth.lacounty.gov/ip/clinics.htm կամ զանգահարել 2-1-1՝ անվճար կամ ցածր արժեքով պատվաստումների կլինիկաների համար:

7. Ինչպե՞ս կարող ենք մենք անդրադառնալ մեր համայնքում կարմրուկի հետ կապված մտահոգություններին:

Շեշտեք, որ կարմրուկը կարող է կանխարգելվել ԿԿԽ (MMR) կամ ԿԿԽՁ (MMRV) պատվաստանյութի միջոցով: Բոլորը պետք է ապահովեն, որ իրենց բոլոր պատվաստումներն անպայման ժամանակին արվեն, ինչը կարող է օգնել նրանց պատշտպանել իրենց, իրենց սիրելիներին և իրենց համայնքը:

Թույլ տվեք ընտանիքներին իմանալ, որ Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչությունն աշխատում է, որպեսզի կանխի մարդկանց հիվանդանալն ու հիվանդության տարածումը՝

- Հետաքննելով շրջանում կարմրուկի բոլոր դեպքերը, որպեսզի կատարվի դեպքերի կառավարում և բացահայտի, թե ով է շփվել վարակված անձի հետ:
- Գտնելով այն մարդկանց, ովքեր կապ են ունեցել կարմրուկով հիվանդի հետ, ստուգելով նրանց անվարակունակության կարգավիճակը և հետևելով ախտանիշներին, որպեսզի կանխվի հիվանդության հետագա տարածումը:
- Սովորեցնելով բուժաշխատողներին կարմրուկի ախտանիշները, ախտորոշումը և դրանք զեկուցելը:
- Ձեռնարկելով անվտանգության միջոցներ, օրինակ՝ ԿԿԽ (MMR) կամ ԿԿԽՁ (MMRV) պատվաստանյութեր տրամադրելով և/կամ սահմանափակելով չպատվաստված այն մարդկանց մասնակցությունը դասերին կամ աշխատանքներին, որոնք հնարավոր է, որ շփված լինեն կարմրուկի հետ: